



Ինչպե՞ս գրել հեշտ կարդացվող նյութ

Բովանդակություն

Թեմա	Էջ
Գրքուկի մասին	3
■ Ինչի՞ մասին է այս գրքուկը	3
■ Ինչո՞ւ է պետք այս գրքուկը	3
■ Ո՞վ կարող է օգտագործել այս գրքուկը	3
Տեքստի մասին	5
■ Որտեղի՞ց սկսել	5
■ Ի՞նչ բառեր ընտրել	5
■ Ինչպե՞ս գրել թվերը	6
■ Ինչպե՞ս կազմել նախադասություններ	7
■ Ինչպե՞ս դասավորել նյութը	7
Դիզայնի մասին	9
■ Ի՞նչ դիզայն ընտրել	9
■ Ի՞նչ տառեր ընտրել	9
■ Ի՞նչ պատկերներ ընտրել	11
■ Ինչպիսի՞ն պետք է լինի տեքստը	13
Մեր մասին	15



Գրքուկի մասին

Այս գրքուկը հեշտ կարդացվող նյութ է:

- Ինչի՞ մասին է այս գրքուկը

Այս գրքուկը օգնում է, որ մարդիկ գրեն նյութեր, որոնք հեշտ կլինի կարդալ ու հասկանալ:

- Ինչո՞ւ է պետք այս գրքուկը

⦿ Երբեմն դժվար է լինում փնտրել ու գտնել նյութեր, որոնք հեշտ է կարդալ ու հասկանալ:

⦿ Մտավոր հաշմանդամություն ունեցող մարդիկ բոլորի պես իրավունք ունեն ստանալ մատչելի տեղեկատվություն:

Դա գրված է Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների մասին կոնվենցիայում:
Այդ կոնվենցիայի 9 հոդվածում գրված է, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է ստանան մատչելի տեղեկատվություն:

⦿ Մատչելի տեղեկատվությունը հեշտ է գրված:
Մենք այն հեշտ կարդում ենք ու հասկանում:

⦿ Երբ իմանում ենք մեր իրավունքների մասին, ավելի լավ ենք կարողանում որոշումներ կայացնել:

- Ո՞վ կարող է օգտագործել այս գրքուկը

Այս գրքուկը կարող են օգտագործել բոլոր մարդիկ, ովքեր ուզում են գրել հեշտ կարդացվող նյութեր:

Հնարավոր է, որ այս գրքուկում լինեն բառեր, որոնք դժվար է հասկանալ:

Եթե առաջին անգամ եք կարդում այս գրքուկը,
հնարավոր է այլ մարդու օգնության կարիք ունենաք:

Այս գրքուկում կարող եք կարդալ.

- **ինչպե՞ս գրել նյութեր**

օրինակ հայտարարություններ, գրքեր, թռուցիկներ.

- **ինչպե՞ս նյութերը ներկայացնել**

օրինակ ինչ գույներ, պատկերներ ու տառեր ընտրել:

Նշում

մեր մասին կարող եք կարդալ
այս գրքուկի ամենավերջին էջում ⇒

15

Տեքստի մասին

- Որտեղի՞ց սկսել

1. Երբ գիտեք, թե ովքեր են կարդալու նյութը, ավելի հեշտ է լինում այն գրել: Եթե ուզում եք, որ նյութը օգտակար լինի մարդկանց համար, պետք է իմանաք, թե ինչ կարիքներ ունեն այդ մարդիկ:
2. Ընտրեք, թե որն է ամենալավ տարբերակը, որով ուզում եք ներկայացնել նյութը:

օրինակ

ձայնագրություն, վիդեո, տեքստ:

3. Լինում են դեպքեր, երբ մարդիկ չգիտեն նյութի թեման: Դրա համար կարելի է մանրամասն բացատրել թեման:
4. Երբ ինչ-որ նյութ եք գրում, փորձեք այդ նյութը քննարկել նաեւ մտավոր հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ:

օրինակ

- Նրանք կարող են մասնակցել, երբ որոշում եք.
- ինչ թեմա ընտրել,
 - ինչ ասել այդ թեմայի մասին:

Նրանք կարող են նաեւ կիսվել, թե որքան հեշտ է հասկանալ նյութը:

- Ի՞նչ բառեր ընտրել

5. Ընտրեք հեշտ ու հասկանալի բառեր: Եթե պետք է ինչ-որ բարդ բառ օգտագործեք, պարզ բառերով բացատրեք դրա նշանակությունը:
6. Ինչ-որ բան բացատրելու համար օգտագործեք օրինակներ: Այնպիսի օրինակներ օգտագործեք, որոնք պարզ ու հասկանալի կլինեն մարդկանց համար:
7. Եթե նկարագրում եք նույն իրը, բառը կամ միտքը, ապա օգտագործեք նույն բառը ամբողջ նյութի մեջ:
8. Չզուշորեն օգտագործեք դերանունները: Դերանունները այն բառերն են, որոնք ցույց են տալիս ինչ-որ իր, բայց չեն ասում այդ իրի անունը:

Դերանունները կարող են նաեւ ցույց տալ ինչ-որ մարդու, բայց չասել այդ մարդու անունը:

օրինակ

իր. «սա», «դա», «այս», «այդ»:
մարդ. «ես», «դու», «նա», «նրանք»:

9. Մի կիրառեք փոխաբերական իմաստ ունեցող բառեր:
Փոխաբերական իմաստ ունեն այն բառերը,
որոնք տարբերվում են սովորական իմաստից:

օրինակ

«արծաթ մազեր» բառերի մեջ
«արծաթ» բառը փոխաբերական իմաստ ունի:

«Արծաթ» բառը օգտագործել են «սպիտակ» բառի փոխարեն,
քանի որ արծաթի գույնը նման է սպիտակ մազերի գույնին:

10. Մի օգտագործեք ուրիշ լեզուներով բառեր:

11. Փորձեք չօգտագործել հապավումներ:
Այն դեպքում, երբ օգտագործում եք հապավումներ,
բացատրեք դրանց նշանակությունը:

օրինակ

երթ գրում եք «ԵՄ»,
բացատրեք, որ դա Եվրոպական միությունն է:

- Ինչպե՞ս գրել թվերը

12. Թվերը մի գրեք բառերով:

Սա նշանակում է, որ պետք է գրել 1, 2 ու չգրել՝ մեկ, երկու:

13. Տոկոսները (63%) ու մեծ թվերը (1,758,625) դժվար է հասկանալ:
Փորձեք տոկոսներ ու մեծ թվեր չգրել:

Դրանց փոխարեն կարող եք գրել «քիչ», «շատ» բառերը:

14. Թվերը մի գրեք գծիկով:

Այդպես միտքը դժվար է հասկանալ:

օրինակ

մի գրեք. «3-րդ անգամ եմ զանգում»:
գրեք. «Արդեն 2 անգամ զանգել եմ»:

15. Երբեք մի գրեք հռոմեական թվերով:

օրինակ

I, III, V, X կամ XVI:

16. Ամսաթվերը փորձեք գրել ամբողջական:

օրինակ

մի գրեք. 15.01.2024 կամ «15» հունվ., 2024թ.
գրեք. Երկուշաբթի, 15 հունվար 2024 թվական:

- Ինչպե՞ս կազմել նախադասություններ

17. Կազմեք կարճ նախադասություններ:

Ամեն նախադասության մեջ գրեք 1 միտք:

Մի բաժանեք տարբեր մտքեր ստորակետերով:

18. Փորձեք գրել ներկա ժամանակով:

19. Նոր նախադասությունը սկսեք նոր տողից:

20. Խոսափեք պասիվացնող նախադասություններից:

օրինակ

մի գրեք. «Նամակը կուղարկվի ձեզ»:

գրեք. «Մենք նամակ կուղարկենք ձեզ»:

21. Պարզ կետադրությունն օգտագործեք:

օրինակ

մի գրեք. «Երեկ աղջկաս՝ Եվայի համար,
դեղին/կապույտ հեծանիվ (նոր) գնեցի»:

գրեք. «Իմ աղջկա անունը Եվա է:

Երեկ նոր հեծանիվ գնեցի նրա համար:

Նոր հեծանիվը դեղին ու կապույտ գույն ունի»:

- Ինչպե՞ս դասավորել նյութը

22. Նյութը պետք է դասավորել այնպես, որ հեշտ լինի հասկանալի:

23. Նույն թեմայի մասին մտքերը գրեք 1 վերնագրի տակ:

24. Ընտրեք պարզ ու հասկանալի վերնագրեր:

Վերնագրերը պետք է ցույց տան, թե ինչի մասին է տեքստը:

25. Համոզվեք, որ ամենակարելոր հատվածը հեշտ է գտնել:
Դա անելու համար կարող եք.

- կարելոր հատվածը դնել ամենասկզբում,
- կարելոր հատվածը դարձնել ավելի **մուգ**,
- կամ կարելոր հատվածը դնել աղյուսակի մեջ:

26. Կարելոր ու բարդ բառերը կարելի է մի քանի անգամ կրկնել:

Դիզայնի մասին

- Ի՞նչ դիզայն ընտրել

1. Ընտրեք էջի A4 կամ A5 չափ, որը հեշտ է կարդալ ու տպել:
2. Ստաճեք նյութի երկարության մասին.
100 էջանոց գիրքը շատ երկար է:
1 մեծ նյութի փոխարեն կարելի է գրել 3 փոքր նյութ:
3. Երբեք մի օգտագործեք այնպիսի դիզայն, որով տեքստը պարզ չի երեւում:


օրինակ

որպես ֆոն մի ընտրեք նախշեր ու նկարներ:



4. Չգույշ եղեք գունավոր ֆոն ընտրելիս:
Երբ օգտագործում եք գունավոր ֆոն, համոզվեք, որ ֆոնը մուգ է, իսկ տեքստը հեշտ է կարդացվում:

օրինակ



- Ի՞նչ տառեր ընտրել

5. Միշտ օգտագործեք պարզ տառեր

օրինակ

Arial կամ Tahoma տառերը հեշտ է կարդալ:

6. Երբեք մի օգտագործեք ձեւավոր տառեր:

օրինակ

ձեւավոր տառ

առանց ձեւավորման տառ

Դ

Դ

օրինակ

Sylfaen տառատեսակը դժվար է կարդալ:

Times New Roman տառատեսակը դժվար է կարդալ:

7. Երբեք տառերը իրար շատ մոտ մի գրեք:

օրինակ

Սա իրար մոտ գրված տառերի օրինակ է:

Սա դժվար է կարդալ, քանի որ տառերը իրար շատ մոտ են:

8. Երբեք մի օգտագործեք շեղ տառեր:

օրինակ

Սա գրված է շեղ տառերով:

Սա դժվար է կարդալ:

9. Երբեք մի օգտագործեք հատուկ ձեւավորում:

օրինակ

Սա ստվերով գրված տեքստ է:

Սա դժվար է կարդալ:

10. Միշտ օգտագործեք տառերի մեծ չափ:

Օգտագործեք առնվազն Arial 14 չափը:

11. Մի գրեք բոլոր տառերը մեծատառով:

Փոքրատառերը ավելի հեշտ է կարդալ:

12. Փորձեք տեքստում օգտագործել միայն 1 տառատեսակ:

13. Ընդգծված բառերը դժվար է կարդալ:

Չգուշությամբ օգտագործեք ընդգծված բառերը:

14. Փորձեք քիչ գրել գուճավոր տառերով, քանի որ

- որոշ մարդիկ չեն կարողանում տարբերել գույները,
- մարդկանց կարող է պետք լինել սեւ-սպիտակ տպել նյութը,
- որոշ գույներ պարզ չեն երեւում տարբեր ֆոների վրա:

օրինակ

սպիտակ ֆոնի վրա դեղին տառերը դժվար է կարդալ:


Սա դժվար է կարդալ

- Ի՞նչ պատկերներ ընտրել

15. Շատ մարդկանց դժվար է տեքստեր կարդալ:
Դրա համար տեքստի կողքը կարող եք դնել պատկերներ:
Պատկերները կօգնեն բացատրել տեքստի իմաստը:

16. Պատկերներ կարող են լինել՝

- ◉ լուսանկարները



- ◉ նկարները



- ◉ նշանները



17. Եթե կարող եք, 1 նյութի մեջ ընտրեք նույն ոճի պատկերներ:

18. Ընտրեք այնպիսի պատկերներ, որոնք համապատասխանում են տեքստը կարդացող մարդուն:

օրինակ

Եթե գրում եք չափահաս մարդու համար, մի ընտրեք երեխայի համար պատկերներ:

19. Միշտ ընտրեք պարզ պատկերներ, որոնք օգնում են հասկանալ տեքստի իմաստը:

օրինակ

համոզվեք, որ լուսանկարը որակյալ է, տարբեր իրեր չկան 1 լուսանկարում:

Սա գիրք կարդացող մարդու պարզ լուսանկար է:



Սա պարզ լուսանկար չէ, քանի որ 1 լուսանկարում շատ իրեր կան:



20. Եթե նկարագրում եք նույն իրը, բառը կամ միտքը, օգտագործեք նույն պատկերը ամբողջ նյութի մեջ:

21. Լինում են դեպքեր, երբ գրաֆիկները բարդացնում են տեքստը: Լինում է նաեւ այնպես, որ գրված նյութը ավելի բարդ է:

Երբ օգտագործում եք գրաֆիկներ կամ աղյուսակներ, պարզեցրեք ու լավ բացատրեք դրանք:

օրինակ

Արփին ժամանակի մեծ մասը աշխատում է համակարգչով:
Նա նաեւ դասընթացներ է անցկացնում:
Արփին գնում է նաեւ կավագործություն սովորելու:
Դրանք ավելի քիչ ժամանակ են պահանջում,
քան համակարգչով աշխատելը:
Արփին երբեմն որոշ նյութեր
դարձնում է հեշտ կարդացվող:

Արփիի ժամանակի գրաֆիկը



- Ինչպիսի՞ն պետք է լինի տեքստը

22. Տեքստը պետք է լինի էջի ձախ կողմում:
Երբ տեքստը բոլոր կողմերից հավասարեցված է,
բառերի մեջ մեծ հեռավորություն կա:
Այդպիսի տեքստը դժվար է կարդալ:

օրինակ

Այս տեքստը հավասարեցված է ձախ կողմում:
Սա հեշտ է կարդալ:

օրինակ

Այս տեքստը հավասարեցված է բոլոր կողմերից:
Սա դժվար է կարդալ:

23. Երբեք մի օգտագործեք ծանոթագրություններ:
Ծանոթագրությունը տեքստի այն բառն է,
որի իմաստը բացատրում ենք էջի ներքեւում:

օրինակ

մի գրեք. «Աննա Ավետյանը¹ եկավ հանդիպմանը»:
գրեք. «Աննա Ավետյանը նկարիչ է:
Աննա Ավետյանը եկավ հանդիպմանը»:

¹ Աննա Ավետյանը նկարիչ է:

- 24. Եթե տեքստում թվարկում ենք ինչ-որ բան, ապա գրեք առանձին կետերով:
- 25. 1 էջի վրա շատ տեքստ մի գրեք:
- 26. Տեքստը սյունյակներով մի գրեք:
- 27. Պարբերությունների միջեւ հեռավորություն թողեք:
- 28. Պարբերության առաջին բառը խորքից մի գրեք:
Ամեն պարբերության առաջին տողը պետք է հավասար լինի տեքստի մյուս տողերին:
- 29. Փորձեք լուսանցքները մեծ պահել, որ էջը շատ նեղ չթվա:
- 30. Փորձեք միշտ համարակալել էջերը:
- 31. Խոսափեք բոլոր հատուկ նշաններից:

օրինակ /, <, § կամ ≈:

- 32. Երբեք մի բաժանեք 1 բառը 2 տողերի վրա:
Սա նշանակում է, որ երբեք մի օգտագործեք տողադարձ (-):
- 33. Փորձեք 1 նախադասությունը տեղավորել 1 տողի վրա:
Եթե պետք է 1 նախադասությունը գրեք 2 տողերի վրա, ապա տեքստը բաժանեք ըստ իմաստի ու հնչեղության:

օրինակ մի գրեք. Այս նախադասությունը դժվար է կարդալ:

գրեք. Այս նախադասությունը հեշտ է կարդալ:

Մեր մասին



Փոփոխություն ՀԿ




Մենք «Փոփոխություն»
հասարակական կազմակերպությունն ենք:

Մենք հավատում ենք, որ
բոլոր մարդիկ հավասար են:


Մենք բոլոր հարցերը քննարկում ենք թիմով:

Երբ միասին ենք որոշումներ ընդունում,
կարողանում ենք լսել բոլորիս կարծիքները:



Այս գրքուկը գրել է մեր թիմը:
Գրքուկը կարդացել են մեր ընկերները
ու կիսվել են իրենց մտքերով:

Մենք շատ շնորհակալ ենք Նարինեին ու Անիին,
որ օգնել են մեզ գրքուկը գրելու ընթացքում:



Մեր հետ կապ հաստատելու համար կարող եք սեղմել [այստեղ](#)
կամ գրել change-armenia@protonmail.com էլեկտրոնային հասցեին

